Արձանագրություն N 9
«ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/2 ծածկագրով գնման ընթացակարգին հանձնաժողովի նիստի

28.02. 2019թ.
Ժամ 10:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահող՝ Է. Ղազարյան (ԳԱ)
Հանձնաժողովի անդամներ՝) Ա. Գասպարյան (ԳԱ) Գ. Սաֆարյան (ԲԱ),
Մ. Վաթինյան (ԲԱ)
Բացակայում է՝ Հանձնաժողովի նախագահ՝ Գ. Մարտիրոսյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Հուրոյան

1.Ոչ գնային պայմաններին բավարարող մասնակցի հետ բանակցությունների վարման մասին

(Է. Ղազարյան)

1.1 Հիմք ընդունելով <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 568-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետը և ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ 20.02.2019թ թիվ ԳԲԽ- ԷՄ-2019/09 որոշումը՝ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/2 ծածկագրով գնման ընթացակարգի 4-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակիցների որոշելու նպատակով անցկացվել է գների նվազեցման բանակցություն:

«ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/2» ծածկագրով գնման ընթացակարգի մասով գների նվազեցման շուրջ հրավիրված միաժամանակյա բանակցությանը ներկայացել են «Նուբարաշեն» ՓԲԸ-ն և «Դինմառ» ՍՊԸ-ն:

Բանակցությունների համար գնահատող հանձնաժողովի որոշմամբ ներկա գտնվող մասնակիցներին տրվեց 15 րոպե ժամանակ:

Բանակցության արդյունքում գնման ընթացակարգին 4-րդ չափաբաժնի մասով

-- «Նուբարաշեն» ՓԲԸ -ի կողմից առաջարկվել է հետևյալ գնային առաջարկը 16100000 (տասնվեց միլիոն հարյուր հազար) ՀՀ դրամ:

-- «Դինմառ» ՍՊԸ -ի կողմից առաջարկվել է հետևյալ գնային առաջարկը 16200000 (տասնվեց միլիոն երկու հարյուր) ՀՀ դրամ:

2. Ընթացակարգի 1-ին և հաջորդաբար տեղեր զբաղեցնող մասնակիցների մասին

(Է. Ղազարյան)

2.1 Գնահատող հանձնաժողովի որոշմամբ «**ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/2**» ծածկագրով գնման ընթացակարգի 4-րդ չափաբաժնի մասով

-- 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել «Նուբարաշեն» ՓԲԸ -ն,

-- 2-րդ տեղ զբաղեցնող է ճանաչվել «Դինմառ» ՍՊԸ -ն,

որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցներ

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4,դեմ - 0:

3. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման և առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու մասին

(Է. Ղազարյան)

1. Ընդունել ի գիտություն որ.

3.1 Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի/այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում է ներկայացվել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն սահմանված ժամկետում ներկայացրել է եզրակացություն, համաձայն որի «Նուբարաշեն» ՓԲԸ «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին

4.Հայտի /որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթեր/ գնահատման արդյունքները

(Է. Ղազարյան)

4.1 «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/2» ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցնող ճանաչված Մասնակիցը, հրավերով սահմանված ժամկետում, ներկայացրել է որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը

5. «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/2 **ծածկագրով գնման ընթացակարգի**
ընտրված մասնակցի մասին
(Է. Ղազարյան)

Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունված որոշումը և <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ կետը՝ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/2 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել

-- 4-րդ չափաբաժնի մասով «Նուբարաշեն» ՓԲԸ -ին,

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:

6.Աշխատանքների կատարման գնման պայմանագրեր
կնքելու որոշում ընդունելու մասին
(Է. Ղազարյան)

6.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 3-րդ կետով ընդունված որոշումը, ինչպես նաև <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը՝

-- Երևան քաղաքի Նուբարաշեն վարչական շրջանի կանաչապատ տարածքների խնամքի և պահպանման աշխատանքների պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել «Նուբարաշեն» ՓԲԸ -ին :

6.2 Սահմանել անգործության ժամկետ տաս օրացուցային օր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:

7.Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը
հաստատելու մասին
(Է. Ղազարյան)

7.1 Հանձնաժողովը որոշեց՝ գնման ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել պայմանագրերը կնքելու կամ ընթացակարգի արդյունքում պայմանագրեր չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդ օրը ժամը 10:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:

Հանձնաժողովի		
Նախագահ՝		Է. Ղազարյան
Անդամներ՝		Ա. Գասպարյան
		Գ. Սաֆարյան
		Մ. Վաթինյան
Քարտուղար՝		Գ. Հուրոյան